

ՊԱՅՄԱՆԱԿԱՆԻ ՏԵՂԸ ԵՂԱՆԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Եղանակավորությունը բառաբերականական հասկացական կարգ է, որն ունի արտահայտման տարբեր միջոցներ՝ քերականական՝ (եղանակ), բառաբերականական (եղանակավորող բայեր և դերբայական կառույցներ), բառային (եղանակավորող բառեր) և հնչերանգային՝ Յուրաքանչյուր նախադասություն, որն ունի խոնարհված բայածև, ունի նաև եղանակավորության արտահայտման քերականական միջոց, չնայած որ, չեն բացառվում նաև մյուս միջոցների առկայության հնարավորությունը նույն նախադասության մեջ: Յուրաքանչյուր նախադասություն արտահայտում է խոսողի և իրականության հարաբերությունը խոսողի տեսանկյունից, որն արտահայտվում է նախադասության ստորոգյալի միջոցով:

Եղանակը լեզվահաղորդակցային և իրադրական արժեք ունի, ուստի բայի եղանակներն էլ դեռևս ուսումնասիրության կարիք ունեն, քանի որ կամ մերժվում, կամ ընդունվում են տարբեր մոտեցումներով:

Սույն հոդվածի նպատակն է քննարկել (պայմանական) եղանակի տեղն անգլերենի եղանակի համակարգում: Շատ լեզվաբաններ չեն ձգտում հստակեցնել պայմանականի (ինչպես նաև մյուս եղանակների) տեղը բայի եղանակների համակարգում և առաջօր պայմանականը դիտվել է՝ 1. սահմանականի ժամանակածև, 2. ստորադասականի տարատեսակ, 3. ստորադասականի երկրորդական եղանակներից մեկը, 4. պայմանական նախադասություն, 5. անիրական եղանակածև 6. եղանակի համակարգից դուրս: Վերջին տարիների քերականության գործնական դասագրքերում հայտնվել են պայմանական I, պայմանական II, պայմանական III, պայմանական 0 տերմինները, որոնք առաջին հայացքից միայն շփոթություն են առաջացնում: Ավելի ճիշտ կլինի ընդունել պայմանական եղանակի գոյությունը անգլերենի եղանակների համակարգում առանց համարակալումների, որոնցով նշվում են իրական, անիրական, միաժամանակյա և նախորդող պայմանականների գործածությունը: Բայց այս տարբերակներից ոչ մեկը հիմնավորված չէ տեսականորեն, ավելի շուտ մեթոդական բնույթ է կրում, գուցե այն պարզ պատճառով, որ դրանք՝ մտածողական եղանակներ են և գոյություն են ունեցել լեզվի վաղ շրջանում և այսօր էլ քիչ գործածական են (Sweet 9):

Ավանդական քերականությունից հայտնի է, որ եղանակը կարող է արտահայտել և եղանակ, և ժամանակ (Բալի, տես 12):

Եղանակների մասին խոսելիս Նեսվիլը (7) դիմավոր բայերի համար տարբերում է երեք եղանակ՝ սահմանական, իրամայական, և ստորադասական

(Subjunctive) և ավելացնում է, որ ստորադասականը երբեմն կոչվում է պայմանական, քանի որ պայմանը գլխավոր, բայց ոչ միակ իմաստն է, որ արտահայտվում է ստորադասական եղանակով: Բայց այն կոչվում է նաև ստորադասական, որովհետև այն նախադասությունը, որտեղ օգտագործվում է ստորադասական եղանակը զուգակցվում է (բայց՝ ոչ միշտ) ուրիշ նախադասությունների հետ: Այսինքն, մեզ թվում է, որ հեղինակը հիմնականում ի նկատի ունի բարդ ստորադասական նախադասությունները պայմանի երկրորդական նախադասությամբ, որտեղ գլխավոր նախադասության մեջ գործածվում է կախյալ հետևանք, որն արդյունք է այն պայմանի: Որև անկախ է և գործածվում է պայմանի երկրորդական նախադասության մեջ: Պայմանականը սակայն միայն բարդ նախադասություններում չէ, որ գործածվում է: Այն կարելի է հանդիպել նաև պարզ նախադասություններում, որի մասին ակնարկում է հեղինակը, երբ փակագծերում նշում է *ոչ միշտ*:

Պայմանական եղանակի շուրջ ծագած քննարկումը Գակը (12) բացատրում է այս եղանակի ծագումով: Եթե սահմանականը և հրամայականը փոխ են առնվել, կամ եկել են լատիներենի բայական համակարգից, ապա պայմանականը փոխ է առնվել ռոմանական լեզուներից: Նորույթ լինելով, այս եղանակը կառուցվածքով մի կողմից սահմանականի ապառնի ժամանակին է նման (*should, would* + անորոշ դերբայ՝ *go*), իսկ մյուս կողմից, այն կազմվում է ավարտվածության գաղափար արտահայտող անորոշ դերբայից (*should/would* + *have gone*): Ուստի Գակը ճիշտ չի համարում պայմանական եղանակ անվանումը, քանի որ այստեղ ոչ մի պայման չկա, հույսը ընդամենը ապամանավորված գործողության մասին է: Լեզվաբան Բլոխն էլ (2) Գակի նման հավանություն չի տալիս «պայմանական» անվանը և պարզեցնելու համար ստեղծված իրավիճակը առաջարկում է անվանել այն Subjunctive երեք, քանի որ արդեն կա Subjunctive I (God bless you) Subjunctive II (I wish he were here.), իսկ I would like to join you, կլինի Subjunctive III.

Պայմանականը ժամանակի ընթացքում ավանդաբար նաև դիտվել է, որպես յուրահատուկ մի եղանակ՝ ենթադրական իմաստով, որի գործառույթներից մեկը եղել է անցյալի ապառնի իմաստը (Բրյունո, Ղոզա, Լեբիդուա, տես 12): Անցյալի ապառնին որպես ժամանակածև կախյալ ժամանակ է, որը գործում է անգլերենում՝ միայն բարդ նախադասություններում՝ խնդիր երկրորդական նախադասությամբ՝ ըստ ժամանակների համաձայնեցման գործող կանոնի: Եթե չգործեր կամ, բացակայեր այդ երևույթը, ապա այդ դեպքում չէր լինի նաև անցյալի ապառնի ժամանակածև: Սակայն այստեղ իրար են խառնվել երկու համանուն քերականական ձևեր՝ պայմանական եղանակը, որը թեք եղանակներից մեկն է, և անցյալի ապառնին, որը սահմանական եղանակի ժամանակածև է և զուտ ապառնիություն է արտահայտում անցյալի տեսան-

կյունից: Ըստ երկրորդ տեսակետի պայմանականը ընդունում է որպես եղանակավորության արտահայտման մի ձև և դիտարկվում է որպես եղանակավորող բայեր սահմանական եղանակում: Սակայն իրենց իմաստով եղանակները տարբեր են, սահմանականը՝ իրական փաստ արտահայտող եղանակ է, իսկ պայմանականը ոչ: Մյուս կողմից *should/would*-ը որպես եղանակավորող բայեր ունեն իրենց իմաստային և գործառնությամբ ինքնուրույնությունը: *Should*-ը համարժեք է *must*, *have to*, *ought to*, *be to*, *shall*-ին, ունի իր ինքնուրույն գործածության դեպքերը, և արտահայտում է անհրաժեշտություն, կամ նրա բացակայություն, խորհուրդ, հրաման, բարոյական պարտք, անխուսափելի մի բան, ցուցում, իսկ *would* բայն արտահայտում է ցանկություն, կամք, համառություն և այլն, և այս երկու եղանակավորող բայերը. 1. երբեք չեն փոխարինի միմյանց, քանի որ համարժեք չեն իրենց գործառնությունով. մինչդեռ *would*-ը գործածվում է ինչպես երկրորդ, երրորդ, այնպես էլ առաջին դեմքի համար /տես. US/: Բացի այդ կրճատ պայմանական եղանակը կազմելիս անհետանում են *should/would*-ի տարբերությունը /I'd, you'd, he'd, she'd, it'd, we'd they'd, իսկ *should/would* եղանակավորող բայերը չի կարելի կրճատել, քանի որ նրանք նույն գործառնություններ չունեն և լինելով եղանակավորող բայեր չեն կրճատվում, ընդհանրապես, ոչ հաստատական և ոչ էլ հարցական խոնարհման մեջ, իսկ ժխտականում՝ թե կան շատ կրճատումներ, ապա դրանք վերաբերում են ոչ թե եղանակավորող բային, այլ ժխտական մասնիկին: 2. նրանք չեն կրճատվի՝ I'd like ձևով, ինչպես դա սովորաբար անում ենք անցյալի ապառնի կամ պայմանական եղանակի դեպքում, որտեղ *should/would*-ը սպասարկու բայեր են և գործածվում են բայի քերականական կարգերն արտահայտելու համար. Ըստ երրորդ տեսակետի պայմանականի հիմնական իմաստը՝ ժամանակային է և այն տեղավորում են սահմանականի մեջ որպես 1. անիրական ապառնի /Գիյոմ 3/: Գիյոմի այս տեսակետը ընդունելի է շատերի կողմից, քանի որ թե պայմանականը և թե ապառնին արտահայտում են մի բան, որը վերաբերում է ապագային, իսկ ապագան միշտ էլ անիրական է: 2. պայմանականն արտահայտում է հարաբերական անցյալ ժամանակ: Սարտինեն (6) այն համարում է նոր կարգ քերականության մեջ՝ տեղեշարժված փաստ, որի տակ նա հասկանում է խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն՝ պահ, որը տեղաշարժվել ու տեղափոխվել է անցյալ: Եվ քանի որ, մի կողմից գալիքին վերաբերող գործողությունն իր մեջ պարունակում է անվստահության գաղափար, մյուս կողմից, եթե այդ գործողությունը կապվում է ներկայի և ոչ թե անցյալի խոսելու պահի հետ, ապա մենք գործ ունենք անիրական ապառնի գործողության հետ: Անշուշտ սրանք կարելի է համարել համանուն երևույթներ, բայց ըստ Գիյոմի տեսակետի ընդունելի չէ լեզվական երևույթների համանունությունը: Մինչդեռ Պաղուչևան (13) բազմիմաստությունը համարում է լեզվական այն

հատկանիշներից մեկը, որը միշտ եղել է, կա և կլինի: Բայական կարգերի բազմիմաստությունը, ըստ այս հեղինակի, եղանակավորության արդյունք է: Յուրաքանչյուր կառույց պետք է մեկ իմաստ արտահայտի, որը նշանակում է, որ Գիյոմը չի ընդունում համանունության երևույթը: Գիյոմի այս տեսակետն իր կնիքը դրեց շատ լեզվաբանների, այդ թվում և Իվոնի վրա: Պայմանականը ժամանակի ընթացքում ավանդաբար դիտվել է, որպես յուրահատուկ մի եղանակ՝ ենթադրական եղանակ (Իվոն, տես 12): Իվոնի տեսակետը կարելի է համարել հաջորդը՝ չորրորդը, որի համաձայն պայմանականը հեռացնում են սահմանականի շրջանակներից և ընդգրկում են ենթադրական եղանակի մեջ: Ի տարբերություն Գիյոմի, որն ապառնի ժամանակը ընդունում էր պայմանականի և ապառնի ժամանակի ցուցիչ, Իվոնը այդ ցուցիչը համարում է գործողության անիրական լինելը (հիպոթեկությունը): Սակայն ըստ Վազների և Պենշոնի պայմանական եղանակի՝ թե՛ ապառնի և թե՛ անցյալ ձևերը կարող են վերաբերել անցյալին, քանի որ նրանք արտահայտում են համաժամանակյա կամ մախորդող գործողություն, իսկ գործողության մախորդումն ու համաժամանակյա լինելը, կախված համատեքստից կարող է վերաբերել ինչպես ներկային, այնպես էլ անցյալին: 1. *He hurries or he would miss the train.* և 2. *He hurried or he would miss the train:* Առաջին և երկրորդ օրինակներում *would miss*-ը պայմանական ներկայի ձև ունի, որը գործածվում է, ինչպես ներկային, այնպես էլ ապառնիին վերաբերվող անիրական գործողություններ արտահայտելու համար: Իսկ սահմանական եղանակը՝ ներկա և անցյալ ժամանակով է արտահայտված, երկու դեպքում էլ միաժամանակ գործողություններ են արտահայտվում, միայն մեկ տարբերությամբ, մեկը միաժամանակյա է իրական ներկաի հետ, մյուսը՝ իրական անցյալի: Մյուս կողմից, եղանակավորության պահով, եթե ընդունենք, որ ապառնի ժամանակով արտահայտված գործողությունը անիրական է, ապա նույն բանը կարելի է ասել նաև ներկայով և անցյալով արտահայտված գործողությունների մասին: Օրինակ, *The plane flies at 5* Բազմաթիվ փաստարկների պատճառով ինքնաթիռը կարող է չիրականացնել իր չվերթը, անկախ չվացուցակի: Մյուս կողմից ապառնի գործողությունն էլ կարող է լինել պայմանավորված: Այսպես դասախոսը զգուշացնում է, որ իրենց հաջորդ դասը կայանալու է երկու օրից և նորից տարբեր պատճառներով այդ դասը կարող է չկայանալ: Ըստ Գալի պայմանական եղանակը և ապառնի ժամանակը միաժամանակ են ստեղծվել, բայց դառնալով սահմանականի ժամանակաձև և կազմելով ներկային հաջորդող ձևը այն կորցրել է եղանակավորությունը, որը սակայն պահպանվել է պայմանականի մեջ (ենթադրական իմաստով), որի մեջ ետին պլան է մղվել ժամանակի գաղափարը: Մինչդեռ անգլերենի անցյալ ապառնին բոլորի կողմից չէ, որ ժամանակաձև է համարվել, այն նաև համարել են՝ ազատ բառակապակցություն, քանի որ ըստ Սմիրնիցկու.

Բարխուդարովի, Շտեյնզգի և ուրիշների չկա իրականության մեջ այնպիսի ժամանակահատված, որը կոչվի անցյալի ապառնի՝ ներկա ժամանակահատված կա, անցյալ ժամանակահատված կա, ապառնի ժամանակահատված կա, բայց անցյալ-ապառնի ժամանակահատված չկա: Իսկ *should/would*-անորոշ դերբայ կազմությունը, որը համարվում է ժամանակաձև, կարելի է հեշտությամբ հեռքել, քանի որ այն գործում է միայն խնդիր երկրորդական նախադասություններում, մինչդեռ մյուս տիպի երկրորդական նախադասություններում ժամանակների համաձայնեցման կանոն չի գործում: Կառուցվածքային առումով միևնույն երևույթն արտահայտված է տարբեր տարրերի միջոցով և կարող է իր արտահայտությունը գտնել տարբեր լեզուներում: Այսպես օրինակ, հայերենում և ռուսերենում չկա ժամանակների համաձայնեցման կանոն: Մյուս կողմից բարձրանում է քերականական համաճեղքության հարցը: Եփշտ է, Գիյոմը չի ընդունում համաճեղքության փաստը և գտնում է, որ արտահայտության մակարդակի յուրաքանչյուր կառույց պետք է մեկ իմաստ ունենա, բայց ժամանակի հետ իմաստները բովանդակության մակարդակում փոփոխվում են, կամ նոր իմաստներ են ավելանում, նույն կառույցը կարող է դառնալ բազմագործառնությային: Կորդին դուրս է բերում պայմանականը սահմանականի շրջանակներից հիմնավորելով, որ այն լինելով սահմանականի համակարգում, չէր փոխարինվի ստորադասական թեք եղանակով:

Բոնարը, Վագները և Պինշոնը (տես 12) պայմանականը համարում են հնարավորության եղանակ (eventual): Դուրս մղվելով սահմանականի շրջանակներից՝ պայմանականը այսօր էլ պահպանվում է որպես առանձին եղանակ, ինչպես անգլերենում, ֆրանսերենում, այնպես էլ մյուս լեզուներում: Պատճառը, թերևս, տարբեր եղանակների գործածությունն է պայմանի երկրորդական նախադասություններում և այն փաստը, որ ամեն պայմանական նախադասություն չէ, որ պայման է արտահայտում: Քվրթը, առանձնացնում է մեկ ստորադասական եղանակ իր տարբերակներով և դրանց մեջ առանձնացնում է անիրական ստորադասականը, որը գործածվում է պայմանի և գիջման երկրորդական նախադասություններում: Ինչպես տեսնում ենք Քվրթը (7), համարելով պայմանականը ստորադասականի տարբերակ, առանց ընդունելու պայմանականի ինքնուրույնությունը, խոսում է պայմանական նախադասությունների մասին, որտեղ գործածվում է պայմանական եղանակը, բայց ոչ պայմանական երկրորդական նախադասություններում, այլ գլխավոր նախադասությունում: Լեզվաբանների մեկ այլ խումբ (Վերխովսկայա, Ռաստարգուևա, Բարմինա 10) ընդունում են ստորադասական եղանակ, բայց այդ եղանակի համակարգում նրանք ընդունում են համադրական և վերլուծական եղանակներ, որը նշանակում է, որ այս հեղինակները հենվում են կառուցվածքային սկզբունքի տարբերության վրա,

առանց նշելու պայմանական եղանակի իմաստաբանական ինքնուրույնությունը որպես եղանակ, որն ունի գործառույթների իր ուրույն ոլորտը:

Որոշ լեզվաբանների մոտ ստորադասական-ը կորցնում է իր եղանակավորությունը և շարահյուսական կախվածություն է ձեռք բերում: Սնշուշտ այս լեզվաբանները շփոթում են երկու տարբեր մակարդակներ՝ ձևաբանականը և շարահյուսականը: Ճիշտ է՝ եղանակը ձևաբանական կարգ է, որն իր շարահյուսական գործառույթներն ունի, բայց հարցը պետք է պարզել երկու մակարդակներում: Պայմանական նախադասությունների մասին խոսում են առանց անգամ ակնարկելու պայմանական եղանակի գոյության մասին: Թերևս պայմանական նախադասությունները միայն դեպքերից մեկն է, որտեղ գործածվում է պայմանական եղանակը:

Գակը, խոսելով պայմանականի իմաստի մասին, այն համարում է հնարավորության եղանակ, որը պոտենցիալ, ենթադրվող գործողություն է և կապված է որոշակի պայմանների հետ և իր մեջ ներառում է 3 իմույթ՝ հնարավորություն (կախված որոշակի պայմաններից) և պայմանավորվածություն: Իմաստային առումով այս իմույթները սերտ կապված են, և համատեքստից կախված, այս իմույթներից մեկը կարող է լինել առաջնային, իսկ մյուսները՝ երկրորդային: Այսպիսով պայմանական եղանակը ցույց է տալիս ցանկալի, հնարավոր մի գործողություն, մի պայման, որն իր էությանը անիրական է: I would be swimming in the Black Sea. Սա ցանկալի գործողություն է, բայց անիրական, քանի որ պայմանները թույլ չեն տալիս իրականացնել այդ գործողությունը, բայց ով գիտե, հնարավոր է, իրականանա այդ ցանկությունը, քանի որ դա ընդամենը ժամանակի հարց է: Իլլիշը՝ (5) առաջատար համարելով իրականության/ոչ իրականության սկզբունքը ընդունում է մեկ իրական եղանակ՝ սահմանական եղանակը, որին հակադրում է մնացած եղանակները, այդ թվում և անիրական պայմանականը: Նա ի տարբերություն Գակի, Իլլիշը որպես հիմք ընդունում է վեց իմույթ՝ 1. որդում, 2. հնարավորություն, 3. անիրական պայման, 4. քիչ հավանական պայման, 5. անիրական պայմանի հետևանք, 6. ցանկություն, նպատակ: Բայց չէ որ երևույթը, ըստ Եսպերսոնի, պետք է ունենա իմաստ, կառուցման, գործառույթ, և նրա հետ մեկտեղ երևույթին տրված անուն: Եթե Իլլիշը առաջ տաներ իմույթի գաղափարը և այն կապեր մեզ արդեն հայտնի պայմանական, ըղձալյան (առաջին և երկրորդ) և ենթադրական եղանակների հետ, կոնկրետացնելով՝ թե որ եղանակում, որ իմույթն է գերակշռում, ապա հասկանալի կլիներ նուա տեսակետը: Բայց նա դրանք անվանեց ուրիշ եղանակներ և դրանք կապեց վերլուծական ձևերի և համաունություն հետ, կանգնելով կես ճանապարհին, ընդունելով՝ եթե կան իմաստային ձևեր, ուրեմն դրանք համաուն ձևեր են:

3. Այն, ինչ արտահայտված է գլխավոր նախադասությամբ, որտեղ պայմանական եղանակ է գործածվում, պայմանավորված է, կախված է երկրոր-

դական նախադասության պայմանից: Երկու նախադասություններն էլ պայման են արտահայտում, սակայն պայմանները, որոնք արտահայտված են երկրորդական նախադասությամբ անկախ են, իսկ գլխավոր նախադասությամբ արտահայտվածը՝ կախյալ, քանի որ նրա իրականացումը պայմանավորված է երկրորդական նախադասության պայմանով. If I had a key I should open the door. Դոան բացելը կախված է բանալի ունենալուց: Գլխավոր նախադասությունը, կարող է բերել՝ իմաստային փոփոխություններ: Ուրեմն, եթե պարզ նախադասության մեջ, պայմանական եղանակն արտահայտում է ցանկություն, խորհուրդ, ապա միևնույն է դա կախված է որոշակի պայմանից, այսինքն կախյալ գործածություն ունի, քանի որ նշված չէ անկախ պայմանը: Բոլորն ընդունում է պայմանական եղանակի առկայությունը, պայմանի և զիջման երկրորդական նախադասություններում, և քանի որ ընդունել է Subjunctive I, subjunctive II, ապա անդրադառնալով պայմանականին, այն համարում է subjunctive III, անիրական եղանակ:

Կաշևայան (15) ընդունում է Subjunctive եղանակի՝ Present, Past, Perfect տարբերակները, բայց հայտնի չէ, թե պայմանականին որ տեղն է հատկացնում եղանակների համակարգում:

Գոյություն ունի մեկ մեկ ուրիշ տեսակետ Մարտին Փարոթի (8) տեսակետը, ըստ որի պայմանական նախադասությունները երբեմն կոչվում են առաջին կամ ապառնի պայմանական: Թե գլխավոր, և թե երկրորդական նախադասության բայը վերաբերում են ապառնիին, չնայած, որ երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը սահմանական ներկայով է արտահայտված: If it gets colder I shall turn on the heating. Իրականում այս նախադասությունը բարդ նախադասություն է, բաղկացած գլխավոր և երկրորդական նախադասություններից, որոնցից if-երկրորդական նախադասությունը Փարոթն անվանում է գլխավոր, իսկ գլխավորը՝ պայմանական (conditional clause): Հասկանալի է, թե ինչու որոշ լեզվաբաններ պայմանականը համարում են ստորադասական երկրորդ. նրա կախվածության պատճառով: Պայմանականը, ըստ Փարոթի, արտահայտում է համոզմունք, զգուշացում, սպառնալիք I shall take the children to the zoo if you collect them from school համոզմունք. If you try to take a short cut you'll get best. If you poke your brother again I'll trash you (սպառնալիք, զգուշացում):=Don't poke your brothers again. If you hadn't driven so fast you would never have had the accident (կշտամբանք). I wouldn't have left my job if I had known how difficult it is to find another (ափսոսանք):

Ինչպես տեսնում ենք, Փարոթն էլ, մյուսների նման, չորանցում է եղանակների, հարցը և անմիջապես անդրադառնում է բարդ նախադասություններին, պայմանի երկրորդական նախադասությամբ, խոսք անգամ չասելով թե

թեք եղանակներից որն է գործածվում նման նախադասություններում, չփոթելով պայմանական եղանակը, պայմանի երկրորդական նախադասության հետ, որտեղ բոլորովին էլ պայմանական եղանակ չի գործածվում, վերջինս գործածվում է կախյալ պայման արտահայտող գլխավոր նախադասության մեջ: Իսկ սա նշանակում է, որ Փարոթը այն հեղինակներից է, որոնք չեն ընդունում պայմանական եղանակի, ինքնուրույնությունը որպես եղանակ: Սյուս կողմից Փարոթը պայմանական եղանակին վերագրում է զգուշացում, կշիռամբանք, համոզմունք, հավատ, որոնք ըստ էության հրամայական եղանակին բնորոշ իմաստներ են, և բխում են իրավիճակից կամ համատեքստից, այսինքն պայմանականի երկրորդական գործառույթներն են:

Ինչևէ, միանալով այն հեղինակների կարծիքին, որ եղանակը եղանակ է և ոչ թե ժամանակ, մենք տարբերում ենք վեց եղանակ՝ ահմամալուն հրամայական, պայմանական, ըղծական առաջին, ըղծական երկրորդ և ենթադրական: Մենք ընդունում ենք պայմանականի գոյությունը և պատրաստվում ենք վերլուծել այն ըստ իմաստի, կառուցվածքի և գործառույթի: Յուրաքանչյուր ենթադրություն հիմնվում է որոշակի պայմանի վրա, այստեղից էլ, ըստ Ջահուկյանի (16) անգլերենի *should/would*-ը և հայերենի, -կ- և -չ- եղանակավորող նախասանիկները, որոնք լրացուցիչ իմաստ են արտահայտում գուցորդվելով ըղծական անցյալի ձևերին, և կոչվում են ենթադրական եղանակի ձևեր, որոնք նաև արտահայտում են որոշակի պայման, ավելի ճիշտ որոշակի պայմանով կատարելի եղելություն: Օր. եթե տեսնեի նրան կխոսեի: Այստեղից էլ ծագում է կ-ով ձևերի պայմանական անվանումը: Չ(ը) նախասանիկը ժխտական իմաստ ունի, որը ցույց է տալիս, որ հաղորդողը ժխտում է հաղորդվող եղելությունների կատարման ցանկալիությունը, կամ հավաստիությունը: Հայերենի ենթադրականը հաղորդողի սուբյեկտիվ ակտիվությամբ, որոշակի եղելության արտահայտություն ձեռք բերելով, ուղղվածություն և ցանկական երանգով հրամայականի արժեք է ստանում: /Ջահուկյան/ (16) Այսպիսով պայմանական եղանակը կա, գոյություն ունի բայի եղանակի համակարգում որպես ինքնուրույն եղանակ և ոչ մի ուրիշ երևույթ չի կատարում լրացման նույն տեղը: Բերականությունն ըստ Կորդիի, ստեղծվում է քերականական երևույթի իմաստային և գործառությային չափանիշների վրա, որոնք ընդհանուր են բոլոր լեզուների համար: Հայերենում ենթադրականի և ըղծականի հակադրությունն իրականացվում է 4-ի բացակայությամբ և առկայությամբ: Ենթադրականը բնութագրվում է հաղորդողի սուբյեկտիվ ակտիվությամբ: Այսպիսով համամիտ ենք այն լեզվաբանների (Սմիրնիցկի և նրա կողմնակիցները) հետ, որոնք ընդունում են պայմանական եղանակի ինքնուրույնությունը և առկայությունը անգլերենի եղանակի համակարգում. համարում են այն առանձին եղանակ, որն ունի իր բուն իմաստը, անիրական պայմանի իմաստը, կառուցվածքը

և գործառույթները, որոնք յուրաքանչյուր նախադասության մեջ նոր երկ-րորդական իմաստ կարող են ձեռք բերել:

Արտահայտության պլանում պայմանական եղանակն ունի 2 ձև արտահայ-տելու համար անիրական գործողություն: Որոշ գրքերում դա համարում են ժամանակ, բայց, մեր կարծիքով, դա ժամանակ չէ, քանի որ should/would օժանդակ բայերը չեն փոխվում ժամանակային առումով, փոփոխվում է միայն այս օժանդակ բայերին հաջորդող անորոշ դերբայի ձևն, ըստ կերպի և ժամանակների հաջորդականության կարգի, որոնք միայն համաժամանա-կություն/ ոչ համաժամանակություն, նախորդում/ ոչ նախորդում են ցույց տալիս և ժամանակի հետ ոչ մի առնչություն չունեն:

Կարելի էր ընդունել, պայմանական եղանակի առաջին և երկրորդ ձևե-րը, բայց ավելի ճիշտ կլիներ անվանել դրանք Խժժաժամանակյա պայմանա-կան, քանի որ առաջին ձևը միայն համաժամանակյա, անիրական գործողու-թյուն է ցույց տալիս, որը հնարավոր է, որ ժամանակի ընթացքում դառնա իրական, իսկ պայմանական երկրորդ ձևը՝ նախորդող, ավարտված և չավարտ-ված անիրական գործողություն է արտահայտում, որը բացարձակ հնարավոր-ություն չունի իրականանալու, ուստի այն էլ կարելի է անվանել նախորդող պայմանական: I ձև՝ should/would + անորոշ դերբայը ընդհանրական կամ ընթացքային (Common/Continuous) կերպում (առանց to-ի) ինչպես ներգործա-կան այնպես էլ կրավորական (should/would be going, should be taken): II ձև՝ should/would + անորոշ դերբայ պերֆեկտային/ոչ պերֆեկտային կարգում, կրավորական, ներգործական, չեզոք սեռում, ինչպես նաև առանց to-ի: Գործա-ծության առումով պայմանական եղանակը կարող է հայտնվել ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասություններում: Պարզ նախադասության գործա-ծությունը կամ դերբայի, դերբայական դարձվածի գործածությունը, բարդ նախադասության փոխարեն, ոճական գործոն է, որի վրա ըստ Զահուկյանի քիչ ուշադրություն են դարձրել, մինչդեռ նման կաղապարավորումը չեզվաբանու-թյան ամենակարևոր խնդիրներից է (Զահուկյան): Այն պարզ նախադասություն-ները, որտեղ գործածվում է պայմանական եղանակը և որոնք իմպլիկացիա են արտահայտում, Բրուտյանը բաժանում է տարբեր տարատեսակների, որտեղ պայմանի իմույթը կարող է արտահայտվել խոր մակարդակում և մի քանի ցուցիչով, և այդ պարզ նախադասություններն արտահայտում են ակսիոմատիկ փաստեր, համընդհանուր ճշմարտություններ, որոնք իրենցից հետո պահան-ջում են պայմանական եղանակի գործածությունը: Թաքնված պայմանը, ըստ Բրուտյանի, կարող է լինել չնշույթափոխված մակերեսային մակարդակում, բայց այն պարտադիր արտահայտվում է խոր մակարդակներում (Բրուտյան): Love would overcome all the difficulties—if you loved, you would overcome all the difficulties. Պարզ նախադասություններում այն օգտագործվում է ցանկության իմաստով և կարող է վերաբերել ինչպես ներկային, ապառնիին այնպես էլ

անցյալին I would stay awake. (հիմա, հաջորդ շաբաթ, հարսանիքի ժամանակ, թե մի ամբողջ տարի), միայն իրավիճակը կամ համատեքստը կարող են հուշել, պարզաբանել թե որ ժամանակահատվածին է վերաբերում գործողությունը։ Այս տիպի նախադասություններում ընդհանրապես բացակայում է իրականության հակադրությունը։ Խոսողը շղարշում է իր ցանկությունը, մղում է այն ետին պլան և դրանով մոր երանգ է տալիս իր նախադասությանը՝ ավելի համեստ ու քաղաքավարի է դարձնում իր ցանկությունը (Սմիրնիցկի 14)։ Որովհետև նա երկու տարբեր ձևերով կարող է արտահայտել իր ցանկությունը ա) I would be swimming in the Black Sea if I were on holiday, որը նշանակում է, որ խոսողն, իր ցանկությունն է արտահայտում։ բ) I would be swimming in the Black Sea. Առաջին օրինակը ավելի բացահայտ է երկրորդ նախադասության համեմատությամբ, որն ավելի արտահայտիչ զգացմունքային է դարձնում իր արտահայտած միտքը։ Երկրորդ օրինակում չի արտահայտվում պայմանը, խոսողը ինքը կարող է իր պատկերացմամբ տալ բազմաթիվ պայմաններ, որոնցից կախված կլինեն խոսողի արտահայտած անհրաժեշտ կախյալ պայմանը։ Այսինքն չնշույթավորված պայմանով նախադասությունը մի ուրիշ երանգ է տալիս։ I would like to do something տիպի նախադասությունները արտահայտում են մի օգտակար բան, որից կարիք չկա հրաժարվել, անկախ նրա անհրաժեշտ լինելուց (Jonattan Bennett, 4)։ Պայմանական եղանակն արտահայտում է խորհուրդ otherwise, or, or else շաղկապներից հետո։ Hurry up (or) You would miss an important meeting. Բայց այստեղ խորհուրդը վերաբերում է հրամայական նախադասությանը, որն իր անկախ պայմանը ներկայացնում է չնշույթավորված պարզ նախադասությամբ, որը նշանակում է՝ If you didn't hurry, you would miss an important meeting. I was holding his hand. Or he would have run away=If I hadn't been holding his hand, he would have run away. Պայմանական եղանակը կարող է գործածվել նաև անորոշ դերբայով արտահայտված ենթակայից հետո՝ To go to church would make you confess everything., որտեղ անորոշ դերբայը գործածվում է պայմանի երկրորդական նախադասության փոխարեն, չնշույթավորված իմույթ արտահայտելու նպատակով։ Խոսքը վերաբերում է չարտահայտված If շաղկապին կամ մեկ ուրիշ համարժեք շաղկապի, որոնք թվով այնքան էլ քիչ չեն (Բրուստյան)։ Թաքնված չնշույթավորված պայմանը կարող է արտահայտվել ոչ միայն անորոշ դերբայով, այլև պարզ գոյականով՝ Some money, and you would start a new business=If you had some money, you would start a new business., կամ էլ նախդրավոր գոյականով With/without my help, you would get nothing=If I didn't help, you would get nothing: Այս մաղդիքներով պայմանը գործածության մեծ ոլորտ ունի։ She couldn't live without his friend's visiting him. Այսօր շատ հետազոտություններ են կատարվել շարահյուսական տարբեր համարժեք միա-

վորների վերաբերյալ, բայց պայման արտահայտող համանուն միավորները դեռևս ուսումնասիրված չեն: Պայմանականը գործածվում է նաև *but for* շաղկապից հետո: Իմաստաբանական առումով *but for*-ը համարժեք է *if it were not for* (եթե ոչ, եթե չլիներ), *except for*, *only for*, *save for*, (վերջինս հնացած ձև է), որոնք անիրական պայման են արտահայտում, այդ պայմանի ցուցիչներն են, որոնք կապում են նախադասության անդամներ և նախադասություններ իրար հետ և մեր մտածողության միջոցով կապում են սուբյեկտիվ իրականության/անիրականության հետ, համարժեք են քերականական կարգերին (Ջահուկյան) և համարվում են քերականական տարբերիչներ (Գալպերին, Կալշանսկի, Մոսկալ՝սկայա, և ուրիշներ, տես 12): Ջահուկյանն այդ ցուցիչները, համարում է իմաստային կրողներ, որոնք տարբերվում են լիմաստ տարբերից միայն գործառնությամբով, քանի որ բառային-և քերականական իմաստների միջև գոյություն ունեցող սահմանը պայմանական է, և քերականական հարաբերությունների հիմքում ընկած են նյութական, իրական, բառային հարաբերություններ, (Բրուսյան 11): *But for her height she would be (have be come) our new beauty* Բոլոր այս գործառնությունները կարող են հանդիպել ինչպես ներկային, անցյալին, այնպես էլ ապառնիին վերաբերող կյանքի իրավիճակներում կամ համատեքստում: Պայմանական եղանակը գործածվում է նաև բարդ նախադասություններում՝ 1.պայմանի երկրորդական նախադասությամբ, 2. զիջման երկրորդական նախադասությամբ: Երկու դեպքում էլ պայմանական եղանակը գործածվում է գլխավոր նախադասության մեջ, և երկու դեպքում էլ պայմանական եղանակի արտահայտած գործողությունը կախյալ է, կախված այն գործողությունից, որն արտահայտվում է պայմանի և զիջման երկրորդական նախադասություններում: Այս նախադասություններում թուլանում է պայմանավորվածության իմաստը և պայմանականն արտահայտում է ենթադրություն /Գալ 12/: Յնարավոր գործողությունն ավելի քիչ որոշակի, ավելի քիչ իրականությանը համապատասխանող, ավելի քիչ կատեգորիկ է, քան սահմանական եղանակով արտահայտված որևէ գործողություն:

Այս հատկանիշները ի հայտ են գալիս նրա այն պոտենցիալ իմաստներում, որոնք պայմանավորված են հիմնական իմաստային բաղադրիչների թուլացմամբ: Այն պայմանական նախադասությունները, որտեղ օգտագործվում է ոչ թե սահմանական եղանակը, այլ պայմանականը, պակասում է գործողության իրականացման հնարավորությունը և այդ ժամանակ պայմանականը ծեռք է բերում եղանակավորության տարբեր իմաստներ՝ 1. ոչ կատեգորիկ հաստատում՝ հարցական նախադասություններում, 2. հրամանի, խորհրդի, դրդման, մեղմացում, 3. հաստատում առանց երաշխիքի, երբ ուրիշի անունից կամ ուրիշ աղբյուրներից տեղեկություն է ասվում: Կասկածը կարող է հայտնվել ինչպես գործողության փաստի այնպես էլ հանգամանքների նկատմամբ,

4. երևակայական գործողություն, 5. բարոյականությունից բխող գործողություն, 6. ենթադրություն գործողության նկատմամբ, 7. գործողության կատարման հնարավորության կտրուկ ժխտում (What would I do. հնչ կանեի):

Գործողության հնարավորությունը ավելի է նվազում, երբ իրավիճակը կամ համատեքստը վերաբերում են անցյալին, քանի որ անցյալի բովանդակության արտահայտման պլանը ավելի որոշակի ու կոնկրետ է, քան ապառնիկինը, - և այստեղ առաջնային է դառնում հեռանկարային իմույթը և պայմանականը ձեռք է բերում ժամանակային իմաստ (անցյալի ապառնի):

Պայմանականը գործածվում է նաև կայուն կապակցություններում արտահայտելու համար համաժամանակային գործողություն, իսկ սահմանային բայերի հետ՝ հետևանք: Պայմանական նախադասությունները հաճախ գործածվում են առանց if շաղկապի՝ շրջուն շարադասությամբ՝ Had the civil war not been fought, American slavery would have continued into the Twentieth century.

Գրականություն

1. Akhmanova O.A., Belenkaya V. The Morphology of the English Verb M. 1975
2. Blokh M. Y. Theoretical Course of English Grammar Moscow 1987
3. Givon T., Syntax and Semantics. New-York 1972
4. Jonnattan Bennett. A Philosophical Guide to Conditionals. Oxford 2006
5. Ilyish B.A. The structure of Modern English. L. 1971
6. Tomson A. J., Martinet A.V. English Grammar Oxford 1979.
7. Nesfield J. Outline of English Grammar 1931
8. Parrot M. Grammar for English Teachers. Cambridge 2000
9. Sweet H. A New English Grammar 1931
10. Verkhovskaya I. P. Rastarguyeva T. A., Barmina L. A. The English Verb. M. 1987
11. Брутян Л. Г. Анализ языковых выражений импликации. Ереван 1992
12. Гак В. Г. Теоретическая грамматика английского языка. Добросвет, 2000
13. Падучева Е. В. О Семантике синтаксиса. Наука 1974
14. Смирницкий А. И. Морфология английского языка. Москва 1957
15. Кашева В. Д. Проблемы языка. Знания и теория английского языка. М. 1978
16. Ջահուկյան Գ. Բ. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները. Ե., 1974